ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1

25.12.2024Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ՄԱԾՁԲ-2025/1» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան «11» 04 2025թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Գասպարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.12.2024թ. կնքված N «ՉՀ-ՄԱԾՁԲ-2025/1» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ և 7.13-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 1-ը կցվում է):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՏԱՐՈՂ»
Չարենցավանի համայնքապետարան	**«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	**Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ**
ՀՀ ՖՆ ԳՎ	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
Հ/Հ 900132173015	**Հ/Հ 220083334700000**
ՀՎՀՀ 03022497	**ՀՎՀՀ 08417097**
	էլ. հասցեն haferdgas@mail.ru
	հեռ. (+37477) 00-08-67
Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան	**Տնօրեն՝ Հ. Գասպարյան**
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
25.12.2024թ. կնքված «ՉՀ-ՄԱԾՁԲ-2025/1» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«11» 04 2025թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140	Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Լուսաբաց» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	2056400	2056400	2056400	2056400	2056400	2056400	2056400	2056400	2056400	2056400

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատուցված ծառայությունների:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132173015
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՏԱՐՈՂ»
«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220083334700000
ՀՎՀՀ 08417097
էլ. հասցեն haferdgas@mail.ru
հեռ. (+37477) 00-08-67

Տնօրեն՝ Հ. Գասպարյան

(ստորագրությունը)
Կ.Տ